2
ՀՈՒԼԻՍԻ
2019

Luys Lnyu®

ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԳԱԶԻ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԾԱՎԱԼՆԵՐԻ ՍՊԱՍՎՈՂ ԱՃԸ ՈՐՊԵՍ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔ.

ՀՆԱՐԱՎՈՐ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ

ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

Նավթի արդյունահանման ծավալների կրճատմանը և միջազգային գների անկմանը զուգահեռ, Ադրբեջանի համար մեծանում է գազի արտահանման գործոնը: Բաքուն փորձելու է այն օգտագործել միջազգային հարաբերություններում իր շահերը սպասարկելու և տարածաշրջանում դիրքերն ամրապնդելու նպատակով: Հայաստանի համար այդպիսի զարգացումների սպառնալիքը գնահատելու համար այս վերլուծությամբ փորձ է արվել ուսումնասիրել ադրբեջանական գազի արտահանման ծավալների ավելացման հեռանկարներն ու խոչընդոտները՝ հաշվի առնելով գազի եվրոպական, տարածաշրջանային ու համաշխարհային շուկաներում նկատվող միտումները:

Վերլուծության առաջին հատվածում ներկայացրել ենք Ադրբեջանում գազի արդյունահանման և արտահանման ներկայիս մակարդակը, ինչը թույլ է տալիս պատկերացում կազմել ոլորտում փաստացիորեն առկա իրավիճակի մասին: Անդրադարձ ենք կատարել Հարավային գազային միջանցքի (ՀԳՄ) ծրագրին, որն առաջիկայում Ադրբեջանից գազի արտահանման ծավալների մեծացման հիմնական գործոնն է լինելու: Փորձել ենք հասկանալ ԵՄ-ի հետաքրքրությունը ՀԳՄ-ի նկատմամբ և այդ նպատակով առանձին ուսումնասիրության ենթարկել գազի եվրոպական շուկայում նկատվող միտումներն ու հեռանկարները:

Փորձել ենք հստակեցնել, թե որքանով է հավանական ՀԳՄ-ի հետագա ընդարձակումը, նաև գնահատել Ադրբեջանի համար դրա կարևորությունը տնտեսական և քաղաքական տեսանկյունից: Ի վերջո, ներկայացրել ենք, թե ինչպիսի հետևանքներ կարող է ունենալ ՀԳՄ-ի շահագործումը Արցախյան հակամարտության վրա և համապատասխան հետևություններ արել Հայաստանի համար:

Վերլուծության արդյունքում եկել ենք եզրակացության, որ գազի արտահանման աճի գործոնը թեև կարող է Բաքվի համար դառնալ կարևոր արտաքին քաղաքական գործոն, սակայն կան նաև Հայաստանի համար դրա բացասական հետևանքները նվազագույնի հասցնելու հնարավորություններ: Ադրբեջանի արտաքին քաղաքական օրակարգում գազի աճող գործոնի զսպումը պետք է լինի Հայասատանի արտաքին քաղաքականության առաջնահերթություններից մեկը:

ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԳԱԶԻ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԾԱՎԱԼՆԵՐԻ ՍՊԱՍՎՈՂ ԱՃԸ ՈՐՊԵՍ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔ.

ՀՆԱՐԱՎՈՐ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ

2000-ական թվականներից ի վեր Ադրբեջանը շարունակաբար օգտագործել է իր էներգետիկ հնարավորությունները ոչ միայն երկրի սոցիալ-տնտեսական վիճակը բարելավելու, այլև արտաքին քաղաքական ազդեցությունը մեծացնելու նպատակով: Այդ քաղաքականությունը հիմնվել է նավթի արտահանման և դրանից ստացվող հսկայական եկամուտների վրա, որոնք օգտագործվել են ինչպես տարածաշրջանում սպառազինությունների մրցավազք հրահրելու, այնպես էլ մի շարք երկրներում Բաքվի շահերի լոբբինգի (այդ թվում՝ Արցախի հարցում իր համար նպաստավոր դիրքորոշում ապահովելու և հակահայկական քարոզչության) նպատակով: Ներկայումս, նավթի արդյունահանման ծավալների կրճատմանը և միջազգային գների անկմանը զուգահեռ, Ադրբեջանի համար մեծանում է գազի արտահանման գործոնը:

Վերջին տասնամյակի ընթացքում Ադրբեջանում գազի արդյունահանման տարեկան ծավալները միջին հաշվով կազմել են 16-19 մլրդ խ. մ.[1]: Ադրբեջանական ՍՕԿԱՌ պետական ընկերության հրապարակած տվյալների համաձայն՝ 2018թ. Ադրբեջանից գազի արտահանման ծավալները նախորդ տարվա համեմատ ավելացել են շուրջ 11%-ով՝ կազմելով 9.438 մլրդ խ. մ.[2]: 2020-ին նախատեսվում է շահագործման հանձնել Հարավային գազային միջանցքը, որի միջոցով ադրբեջանական «Շահ Դենիզ-2» հանքավայրից պետք է տարեկան ևս 16 մլրդ խ. մ. գազ արտահանվի դեպի Վրաստան, Թուրքիա, Հարավային և Արևելյան Եվրոպա: Եթե ոչ տնտեսական արդյունքի, ապա քաղաքական ազդեցության տեսանկյունից այս ծրագիրը միտված է լինելու Ադրբեջանի արտաքին քաղաքական դիրքերի ամրապնդմանը:

Հայաստանի համար այսպիսի զարգացումների սպառնալիքը գնահատելու տեսանկյունից բավարար չէ ուսումնասիրել ադրբեջանական գազի արտահանման ծավալների ավելացման հեռանկարներն ու խոչընդոտները: Հարկավոր է նաև հաշվի առնել գազի եվրոպական, տարածաշրջանային ու համաշխարհային շուկաներում

[1] http://www.cisstat.com/
[2] http://interfax.az/view/755799

նկատվող միտումները և ճիշտ գնահատել Ադրբեջանի տեղն ու դերը այդ շուկաներում: Նման ուսումնասիրությունը թույլ կտա հստակեցնել, թե իրականում գազի արտահանման ծավալների ավելացումը ինչ հավելյալ արտաքին քաղաքական լծակներ կտա Ադրբեջանին՝ հատկապես այն երկրներում, որոնք Հարավային գազային միջանցքի միջոցով նախատեսում են ադրբեջանական գազ ստանալ:

ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ ԳԱԶԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԵՎ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՆԵՐԿԱՅԻՍ ՄԱԿԱՐԴԱԿԸ

2018թ. հունիսին «Բրիթիշ Փեթրոլիումի» հրապարակած «Համաշխարհային էներգիայի վիճակագրական վերլուծության»[3] համաձայն՝ 2017թ. տարեվերջի դրությամբ Ադրբեջանում գազի հաստատված պաշարները կազմել են 1.3 տրլն խ. մ. (համաշխարհային պաշարների 0.7%-ը): Նույն աղբյուրի համաձայն՝ 2017թ. Ադրբեջանում գազի արդյունահանման ծավալները կազմել են 17.7 մլրդ խ. մ. (համաշխարհային արդյունահանման 0.5%-ը), իսկ ներքին սպառումը՝ 10.6 մլրդ խ. մ. (համաշխարհային սպառման 0.3%-ը): Նշենք, որ ադրբեջանական աղբյուրներում երկրի գազի պաշարները գնահատվում են 2.6 տրլն խ. մ.:

Ադրբեջանի ազգային վիճակագրական ծառայության հրապարակած տվյալների համաձայն՝ 2018թ. երկրում ապրանքային գազի արդյունահանումը կազմել է 19.2 մլրդ խ. մ.[4]: Նախորդ տարի Ադրբեջանում գազի սպառումը կազմել է 11.2 մլրդ խ. մ., իսկ արտահանումը ՝ շուրջ 9.5 մլրդ խ.մ., որից 7.3 մլրդ խ. մ.՝ դեպի Թուրքիա, 2.2 մլրդ խ. մ.՝ դեպի Վրաստան[5]: Ադրբեջանը անցյալ տարի շուրջ 1 մլրդ խ. մ. գազ ներկրել է Ռուսաստանից, բացի այդ Բաքուն որոշակի քանակությամբ գազ ներկրել է նաև Ղազախստանից:

Ադրբեջանական գազի մատակարարումը Վրաստան և Թուրքիա իրականացվում է հարավկովկասյան գազատարի միջոցով, ընդ որում այդ մատակարարումների տարեկան ծավալը չի գերազանցում 10 մլրդ խ. մ.-ը: Այս խողովակաշարի ընդարձակման աշխատանքներն արդեն ավարտվել են, որի արդյունքում Ադրբեջանի տարածքում կառուցվել է հավելյալ խողովակաշար և երկու նոր ճնշման կայաններ՝ Վրաստանում: Փոփոխությունների արդյունքում նախատեսված է, որ առկա ենթակառուցվածքները հնարավորություն կտան եռապատկել մատակարարվող գազի ծավալները[6]:

[3] https://www.bp.com/content/dam/bp/business-sites/en/global/corporate/pdfs/energy-economics/statistical-review/bp-stats-review-2018-full-report.pdf

[4] https://azertag.az/ru/xeber/V_proshlom_godu_v_Azerbaidzhane_bylo_dobyto_387_milliona_tonn_nefti_i_192_milliarda_kubometrov_gaza-1236207

[5] http://interfax.az/view/755799

[6] https://www.bp.com/en_az/caspian/operationsprojects/pipelines/SCP.html

[7]

Ադրբեջանը մինչ այժմ գազի արդյունահանման հիմնական ծավալները ապահովում էր «Շահ Դենիզ» հանքավայրի շահագործման 1-ին փուլի միջոցով, որից 2018թ. 11.5 մլրդ խ. մ. գազ է արդյունահանվել[8]: 2018թ. մեկնարկել է «Շահ Դենիզ» հանքավայրի շահագործման 2-րդ փուլը, որի ամբողջական շահագործման արդյունքում նախատեսվում է տարեկան արդյունահանել ևս 16 մլրդ խ. մ. գազ և այն ուղղել դեպի թուրքական ու եվրոպական շուկաներ[9]:

ՀԱՐԱՎԱՅԻՆ ԳԱԶԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔ

Հարավային գազային միջանցքով նախատեսվում է ադրբեջանական «Շահ Դենիզ» հանքավայրի շահագործման 2-րդ փուլի արդյունքում արդյունահանվող գազն ուղղել դեպի թուրքական և եվրոպական շուկաներ: Ծրագիրը պայմանականորեն բաղկացած է 4 հատվածից՝ «Շահ Դենիզի» շահագործման 2-րդ փուլի մեկնարկ, Հարավկովկասյան խողովակաշարի արդիականացում, «TANAP» ծրագրի իրագործում (որը ենթադրում է խողովակաշարի կառուցում Թուրքիայի տարածքում, ինչը թույլ կտա ադրբեջանական գազը Վրաստանի սահմանից հասցնել մինչև Բալկաններ), ինչպես նաև «TAP» ծրագրի իրականացում (որի շրջանակներում խողովակաշարը Թուրքիայի սահմանից բալկանյան երկրների տարածքով և Ադրիատիկ ծովով պետք է հասնի Իտալիա):

«Շահ Դենիզ» հանքավայրի շահագործման 2-րդ փուլի և Հարավկովկասյան խողովակաշարի արդիականացման աշխատանքներն ավարտվել են դեռևս 2018-ին: Նախորդ տարվա հունիսին՝ Ադրբեջանի, Թուրքիայի, Ուկրաինայի, Հյուսիսային Կիպրոսի և Սերբիայի նախագահների մասնակցությամբ, Թուրքիայում տեղի ունեցավ «TANAP» խողովակաշարի շահագործման մեկնարկի հանդիսավոր

[7] http://www.atahq.org/wp-content/uploads/2016/07/ms-2016-south-caucasus-map-1.png
[8] https://www.bp.com/en_az/caspian/operationsprojects/Shahdeniz/SDstage1.html
[9] https://www.bp.com/en_az/caspian/operationsprojects/Shahdeniz/SDstage2.html

արարողությունը[10]: «TAP» ծրագիրն ընթացքի մեջ է, և 2019թ. փետրվարի դրությամբ իրականացվել է նախատեսվող աշխատանքների 85.2%-ը[11]:

12

«TAP»-ը (Տրանսադրիատիկ գազատար) պետք է անցնի Հունաստանով, Ալբանիայով և Ադրիատիկ ծովով հասնի Իտալիա: Նախատեսվում է, որ մինչև 2019թ. վերջը այս խողովակաշարի շինարարական աշխատանքները կավարտվեն, իսկ 2020-ից կմեկնարկի գազի մատակարարումը[13]: Գազը պետք է մատակարարվի Հարավարևելյան Եվրոպայի մի շարք երկրների, թեև նախատեսվող ծավալները (10 մլրդ խ. մ.) բավարար չեն տարածաշրջանի շուկայի ամբողջ կարիքները բավարարելու համար: Այդուհանդերձ, երկարաժամկետ հեռանկարում ծրագրի հեղինակները մտադիր են ավելացնել Հարավային գազային միջանցքի հզորությունը և կրկնապատկել մատակարարվող գազի ծավալները, թեև նման ծրագրի իրագործելիությունը կապված է մի շարք բարդությունների հետ, որոնց կանդրադառնանք ստորև:

ԵՄ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԳՄ-Ի ՆԿԱՏՄԱՄԲ

2019թ. մարտի 11-ին Եվրոպական միությունը հրապարակեց Ադրբեջանի հետ հարաբերությունների մասին իր տարեկան զեկույցը, որտեղ անդրադարձ է կատարվում Հարավային գազային միջանցքին: Նշվում է, որ 2019-ից կմեկնարկի «Շահ Դենիզ-2»-ի շահագործումը, որը նախապես կապահովի տարեկան 9 մլրդ խ. մ. գազի արդյունահանում, ապա այդ թիվը կհասնի 16 մլրդ-ի, իսկ Ադրբեջանական գազը Եվրոպա կհասնի արդեն 2020-ից: ԵՄ զեկույցում նշվում է, թե ծրագրի իրականացման գործում ինչ դերակատարություն են ունեցել եվրոպական կառույցները, այդ թվում՝ Եվրոպական ներդրումային բանկը և Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկը[14]:

---

[10] https://www.tanap.com/media/news/turkey-historic-tanap-gas-pipeline-project-goes-live/
[11] https://www.tap-ag.com/pipeline-construction/project-progress
[12] https://upload.wikimedia.org/wikipedia/commons/0/0a/TAP_TANAP_SCP_Schah_Denis.png
[13] https://www.tap-ag.com/pipeline-construction/building-the-pipeline
[14] https://data.consilium.europa.eu/doc/document/ST-7443-2019-INIT/en/pdf

ԵՄ-ն Հարավային գազային միջանցքը դիտարկում է որպես գազի ներմուծման աշխարհագրության դիվերսիֆիկացիայի և ռուսական գազից կախվածության թուլացման միջոց, սակայն ակնհայտ է, որ նախատեսվող հզորությունները այս հարցում չեն կարող որոշակի լուրջ փոփոխություններ ապահովել: Ուշագրավ է, որ Եվրոպական էներգետիկ կազմակերպությունների մասնակցությունը այս ծրագրին այնքան էլ մեծ չէ, մինչդեռ Հարավային գազային միջանցքը վայելում է ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի աջակցությունն ու մասնակցությունը: Մասնավորապես՝ «Բրիթիշ Փեթրոլիումը» նախագծի խոշոր բաժնետերերից մեկն է: Ակնհայտ է, որ ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի հետաքրքրությունը ծրագրի նկատմամբ քաղաքական դրդապատճառներ ունի և միտված է ԵՄ-ում ՌԴ-ի ազդեցության թուլացմանը:

Եթե հարցը դիտարկենք զուտ տնտեսական տեսանկյունից, ապա ակնկալվող տարեկան 10 մլրդ խ. մ. գազը ընդամենը կազմում է ԵՄ-ում տարեկան սպառվող գազի ծավալների շուրջ 2%-ը, իսկ ներմուծման՝ շուրջ 3%-ը: Ընդ որում, ԵՄ գազ ներկրող մյուս երկրները, առաջին հերթին՝ ՌԴ-ն, իրականացնում են ներմուծման ծավալների ավելացմանը միտված մի շարք լայնամասշտաբ ծրագրեր, որոնց մասշտաբներն անհամեմատելի են Հարավային գազային միջանցքի հզորությունների հետ: Հասկանալու համար, թե ինչ տեսակարար կշիռ է ունենալու Հարավային գազային միջանցքը ԵՄ-ի համար, հարկավոր է ուսումնասիրել գազի եվրոպական շուկան՝ առհասարակ և Հարավարևելյան Եվրոպայի շուկան՝ մասնավորապես:

ԳԱԶԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՇՈՒԿԱՆ. ՄԻՏՈՒՄՆԵՐՆ ՈՒ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

ԲՓ-ի հրապարակած տվյալների համաձայն՝ 2017-ին ԵՄ-ում սպառվել է 466.8 մլրդ խ. մ. գազ, մինչդեռ ԵՄ տարածքում գազի արդյունահանման ծավալները կազմել են 117.8 մլրդ խ. մ.: Ընդ որում, վերջին տարիներին ԵՄ-ում գազի սպառումը անընդհատ աճ է գրանցում, մինչդեռ արդյունահանումը վերջին տասը տարիների ընթացքում տարեկան գրեթե 5%-ով նվազում է: Ավելին, ԵՄ-ի հաստատված բնական գազի պաշարները 2017թ.-ի տվյալներով կազմում են ընդամենը 1.2 տրլն խ. մ., ինչը նշանակում է, որ արդյունահանման ներկայիս տեմպի պահպանման դեպքում առաջիկա տասնամյակի ընթացքում եղած պաշարները կսպառվեն: Հետևաբար ԵՄ-ում նավթի արդյունահանման ծավալների կրճատման միտումը պահպանվելու է նաև առաջիկայում[15]:

Եվրոպայում գազի հիմնական մատակարարը 2018-ին շարունակել է մնալ Գազպրոմը: Ընկերությունը ընդհանուր առմամբ 2018-ին շուրջ 201.8 մլրդ խ. մ. (ընդհանուր ներմուծման մոտ 37%-ը) գազ է մատակարարել Եվրոպա և Թուրքիա: Այնուհետև հաջորդում են Նորվեգիան՝ 130.5 մլրդ խ. մ., Ալժիրը՝ 48.4 մլրդ խ. մ., Կատարը՝ 23.4 մլրդ խ. մ.[16]: Փաստորեն, ՌԴ-ն շարունակում է մնալ Եվրոպայի համար գազի հիմնական մատակարարը: Ինչ վերաբերում է Թուրքիային, ապա 2018-ին Գազպրոմը 13%-ով կրճատել է մատակարարումները, ինչի արդյունքում այն կազմել է

[15] https://www.bp.com/content/dam/bp/business-sites/en/global/corporate/pdfs/energy-economics/statistical-review/bp-stats-review-2018-full-report.pdf
[16] https://www.rbc.ru/business/26/02/2019/5c7516a89a79475ea07a38cc

շուրջ 24 մլրդ խ. մ. գազ: Սա մի փոքր պակաս է, քան Թուրքիայի տարեկան սպառման 50%-ը[17]:

Ներկայումս ՌԴ-ն ԵՄ-ին գազ է մատակարարում հիմնականում մի քանի խոշոր խողովակաշարերով, իսկ առաջիկա տարիներին շահագործման կհանձնվեն նոր խողովակաշարեր: Ռուսական ամենախոշոր գազատարը՝ «Եղբայրությունը», անցնում է Ուկրաինայի և Սլովակիայի տարածքով և ի վիճակի է տարեկան 100 մլրդ խ. մ. գազ մատակարարել դեպի Եվրոպա: Գործող մյուս խողովակաշարերից «Յամալ-Եվրոպան»՝ տարեկան 33 մլրդ խ. մ. հզորությամբ, անցնում է Ռուսաստանի, Բելառուսի, Լեհաստանի տարածքով, «Հյուսիսային հոսք-1»-ը անցնում է Ռուսաստանով, Բալթիկ ծովով մինչև Եվրոպա և ի վիճակի է փոխադրել տարեկան 55 մլրդ խ. մ. գազ:[18] Ուկրաինայի, Մոլդովայի և Ռումինիայի տարածքով անցնող մյուս խողովակաշարը օգտագործվում է բալկանյան երկրներին և Թուրքիային գազ մատակարարելու համար: Մեկ այլ՝ «Կապույտ հոսք» խողովակաշարով ՌԴ-ն տարեկան 16 մլրդ խ. մ. գազ է մատակարարում Թուրքիային:

Բացի վերոհիշյալ խողովակաշարերից, որոնց ընդհանուր տարեկան հզորությունը գերազանցում է 200 մլրդ խ. մ.-ը, Գազպրոմը մինչև 2019թ. ավարտը նախատեսում է Եվրոպայում և Թուրքիայում շահագործման հանձնել ևս 2 խողովակաշար: «Հյուսիսային հոսք-2»-ը, որը նախատեսվում է շահագործման հանձնել այս տարվա դեկտեմբերին, պետք է ՌԴ-ից Բալթիկ ծովով Գերմանիա տեղափոխի տարեկան ևս 55 մլրդ խ. մ. գազ[19]: Մեկ այլ՝ «Թուրքական հոսք» նախագծով, որի շահագործման մեկնարկը նույնպես նախատեսվում է 2019-ի վերջին, Գազպրոմը տարեկան 15.75 մլրդ խ. մ. գազ կմատակարարի Թուրքիային և նույնքան էլ Արևելյան Եվրոպային[20]: Այսինքն՝ մինչև 2020թ. Գազպրոմը խողովակաշարերով Եվրոպային և Թուրքիային գազ մատակարարելու տարեկան հզորությունը կհասցնի գրեթե 300 մլրդ խ. մ.-ի, ինչի արդյունքում ավելի կամրապնդի իր դիրքերը այդ շուկաներում:

[17] https://biz.censor.net.ua/news/3107537/turtsiya_sokratila_zakupku_gaza_u_rossii_do_menee_50_vpervye_s_2010_goda
[18] http://www.gazpromexport.ru/projects/transportation/
[19] http://www.gazprom.ru/projects/nord-stream2/
[20] http://www.gazprom.ru/projects/turk-stream/

[21]

Վերջին տարիներին ԵՄ-ում ակտիվ աշխատանքներ են տարվում նաև թերթաքարային գազի արդյունահանման ծավալները ավելացնելու ուղղությամբ: Թերթաքարային գազի խոշոր պաշարների են տիրապետում Լեհաստանը, Ռումինիան, Ուկրաինան, Մեծ Բրիտանիան և մի շարք այլ եվրոպական երկրներ: Գազի այս տեսակի արդյունահանումը տնտեսապես արդյունավետ լինելու դեպքում այս երկրները կարող էին ոչ միայն բավարարել գազի սեփական պահանջները, այլև արտահանել ԵՄ այլ երկրներ: Սակայն թերթաքարային գազի ինքնարժեքը բարձր է, ուստի Գազպրոմից մատակարարվող էժան գազի առկայության պարագայում դրա արդյունահանումը դառնում է տնտեսապես ոչ արդյունավետ[22]:

ԱՄՆ-ում վերջին տասնամյակում տեղի ունեցած թերթաքարային գազի արդյունահանման «հեղափոխությունը» նույնպիսի արագ տեմպերով նաև ԵՄ-ում

[21] https://www.kp.ru/daily/26840.7/3882220/
[22] https://www.vestifinance.ru/articles/112272

չտարածվեց: Եվրոպայի աշխարհագրական առանձնահատկությունների և շուկայում առկա մրցակցության շնորհիվ թերթաքարային գազի արտադրությունը համարվում է ոչ այնքան եկամտաբեր ուղղություններից, թեև սեփական էներգետիկ անվտանգությունն ամրապնդելու նպատակով հետագայում չի բացառվում ոլորտի զարգացումը: Այնուամենայնիվ, այն կապված է նաև մի շարք բնապահպանական խնդիրների հետ, ինչի պատճառով ԵՄ որոշ անդամ երկրներում, այդ թվում՝ Ֆրանսիայում և Գերմանիայում, թերթաքարային գազի արդյունահանման որոշ նախագծեր սառեցվել կամ կասեցվել են:

Գազի եվրոպական շուկայում վերջին տարիներին նկատվում է նաև հեղուկ գազի (LNG) ներմուծման ծավալների աճ: 2017-ին այն կազմել է 65.7 մլրդ խ. մ., իսկ այս տեսակի ամենախոշոր ներկրողները եղել են Կատարը (23.7 մլրդ խ. մ.), Ալժիրը (14.1 մլրդ խ. մ.), Նիգերիան (12.2 մլրդ խ. մ.), Նորվեգիան (4.8 մլրդ խ. մ.), Պերուն (3.9 մլրդ խ. մ.) և ԱՄՆ-ը (2.6 մլրդ խ. մ.)[23]: Թեև վերջին տարիներին ԱՄՆ-ը ավելացնում է հեղուկ գազի մատակարարումները դեպի Եվրոպա, գնագոյացման առումով այն մրցունակ չէ, ինչի մասին վկայում է այն փաստը, որ ԵՄ-ում առկա հեղուկ գազի ընդունման կայանները ծանրաբեռնված են իրենց հզորության միայն 25%-ով, իսկ նման նոր կայանների կառուցումը (Լեհաստանում, Ուկրաինայում և Եվրոպայի այլ երկրներում) մի շարք փորձագետների գնահատմամբ կրում է քաղաքական իմաստ:

Չնայած դրան՝ առաջիկայում սպասվում է դեպի Եվրոպա ամերիկյան հեղուկ գազի մատակարարման ծավալների աճ՝ առաջինը Լեհաստանի հետ կնքված նոր պայմանագրերի շնորհիվ: 2018թ. սեպտեմբերին լեհական PGNiG կազմակերպությունը պայմանագիր է կնքել ամերիկյան Venture Global LNG կազմակերպության հետ, որի համաձայն՝ առաջիկա 20 տարիների ընթացքում պետք է ներմուծվի 2 մլրդ տոննա հեղուկ գազ: 2018թ. նոյեմբերին ամերիկյան Cheniere Marketing International կազմակերպության հետ կնքված մեկ այլ պայմանագրով նախատեսվում է առաջիկա 24 տարիների ընթացքում Լեհաստան ներմուծել 31 մլրդ խ. մ. գազ: Ընդհանուր առմամբ նախատեսվում է տարեկան միջին հաշվով 4.6 մլրդ խ. մ. ամերիկյան հեղուկ գազ ներմուծել Լեհաստան, թեև քիչ հավանական է, որ գնի տեսանկյունից այն կարող է մրցակցել ռուսական գազի հետ[24]:

ԱՄՆ-ից հեղուկ գազի արտահանման աճին զուգահեռ աճում է նաև դրա պահանջարկը ասիական շուկայում, որտեղ պահպանվում են նաև գազի բարձր գները: Ընդհանուր առմամբ, ԱՄՆ-ը 2017-ին դեպի Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջան արտահանել է 7.1 մլրդ խ. մ. գազ: Այս շուկայում գազի աճող պահանջարկը թույլ է տալիս ենթադրել, որ առաջիկայում ԱՄՆ-ը և հեղուկ գազ արտահանող մյուս երկրները իրենց հիմնական ուշադրությունը կենտրոնացնելու են

[23] https://www.bp.com/content/dam/bp/business-sites/en/global/corporate/pdfs/energy-economics/statistical-review/bp-stats-review-2018-full-report.pdf
[24] https://www.vestifinance.ru/articles/112272

այս տարածաշրջանի վրա, և դժվար թե նախընտրեն հեղուկ գազը իջեցված գներով վաճառել Եվրոպային:

Այսպիսով, առաջիկայում ՌԴ-ն ոչ միայն չի կորցնի իր դիրքերը եվրոպական գազի շուկայում, այլև կարող է էականորեն ամրապնդել դրանք: Տեսակետները, թե Հարավային գազային միջանցքը կարող է Գազպրոմի համար լուրջ մրցակից դառնալ, չեն համապատասխանում առկա իրողություններին, քանի որ միայն ռուսական գործող և կառուցվող խողովակաշարերի ընդհանուր հզորությունը գրեթե 30 անգամ գերազանցում է Հարավային գազային միջանցքի թողունակությանը:

Եթե ընդհանուր եվրոպական շուկայում Հարավային գազային միջանցքը չի կարող Ադրբեջանի համար որոշակի էական դերակատարություն ապահովել, ապա նույնը չի կարելի ասել Թուրքիայի, Վրաստանի և Հարավարևելյան Եվրոպայի որոշ երկրների մասին: Ինչպես նշվեց, Թուրքիան անցյալ տարի կրճատել էր ՌԴ-ից ներմուծվող գազի ծավալները՝ փոխարենը ավելացնելով ադրբեջանական գազի ներմուծման ծավալները: Հարավային գազային միջանցքի ամբողջական շահագործումը Ադրբեջանին թույլ կտա Թուրքիային մատակարարվող գազի տարեկան ծավալները հասցնել 12-13 մլրդ-ի, ինչը կմեծացնի Թուրքիայում Բաքվի ազդեցությունը: Սակայն այստեղ էլ Գազպրոմը կպահպանի խաղի կանոնները թելադրողի դիրքերը, քանի որ «Թուրքական հոսքի» շինարարությունից հետո հնարավորություն կունենա անմիջապես Սև ծովով Թուրքիային մատակարարվող ծավալները հասցնել շուրջ 32 մլրդ խ. մ.-ի:

Ավելին, «Թուրքական հոսքի» շահագործումը Գազպրոմին հնարավորություն կտա սահմանափակել Ադրբեջանի հնարավորությունները նաև Արևելյան Եվրոպայում: Միջազգային փորձագիտական շրջանակներում բազմիցս տեսակետ է հնչել, թե Ադրբեջանը սեփական ռեսուրսներով ի վիճակի չի լինի ապահովել Հարավային գազային միջանցքով նախատեսված գազի ծավալները: Ոլորտի ռուս փորձագետները նշում են, որ «Թուրքական հոսքի» շահագործումը Գազպրոմին թույլ կտա լրացնել այդ պակասը, մանավանդ, որ ԵՄ օրենսդրությունը դրա համար նպաստավոր պայմաններ է ստեղծում (միևնույն կազմակերպությունը իրավունք չունի միաժամանակ հանդիսանալ գազի ներկրողը, մատակարարողն ու բաշխողը):

ԿԸՆԴԱՐՁԱԿՎԻ՞ ԱՐԴՅՈՔ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԳԱԶԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԸ

Հարավային գազային միջանցքի նախագծով հետագայում գազատարը պետք է ընդարձակվի, որի արդյունքում տարեկան մատակարարվող գազի ծավալները պետք է 16-ից հասնեն 32 մլրդ խ. մ.-ի: Նման սցենարի իրագործումը արդեն որոշակիորեն իր ազդեցությունը կունենա գազի Եվրոպական շուկայի վրա: Սակայն հարկավոր է հասկանալ, թե որքանով է այն իրատեսական և ինչ ռիսկեր է պարունակում:

Գազի ոլորտի փորձագետները համոզված չեն, որ Ադրբեջանը ի վիճակի կլինի ապահովել Հարավային գազային միջանցքով մատակարարվող գազի ամբողջ

ծավալը: Մտահոգությունները անհիմն չեն, քանի որ Ադրբեջանի սեփական սպառումը հետզհետե աճում է, և ստանձնած միջազգային պարտավորությունները կատարելու համար Բաքուն ստիպված է լինում գազ ներկրել այլ երկրներից: «Շահ Դենիզ-2»-ի շահագործումից նախատեսվում է տարեկան 16 մլրդ խ. մ. գազ արդյունահանել, ուստի Հարավային գազային միջանցքի ընդարձակման համար Ադրբեջանը ստիպված կլինի գազ ներմուծել այլ երկրներից: Որպես հավանական տարբերակներ նշվում են Իրանից, Թուրքմենստանից, Ղազախստանից, Ուզբեկստանից կամ ՌԴ-ից գազ ներկրելու և խողովակաշարով Եվրոպա հասցնելու տարբերակները: Անդրադառնանք դրանց:

ԻՐԱՆ

Իրանը այժմ սեփական գազը Եվրոպա է հասցնում հիմնականում հեղուկ գազի տեսքով, թեև իրանական կողմը բազմիցս նշել է գազը խողովակաշարով Եվրոպա հասցնելու իր մտադրությունների մասին: Սակայն առայժմ գազի արդյունահանման ծավալները Իրանում այնքան էլ մեծ չեն, ինչը խողովակաշարի կառուցումը տնտեսապես եկամտաբեր կդարձներ: «Բրիթիշ Փեթրոլիումի» տվյալներով 2017-ին Իրանում գազի արտադրությունը կազմել է 224 մլրդ խ. մ., իսկ ներքին սպառումը՝ 214 մլրդ խ. մ.: Թեև գազի համաշխարհային պաշարներով Իրանը աշխարհում զբաղեցնում է 2-րդ տեղը՝ 33.2 տրլն խ. մ., զիջելով միայն ՌԴ-ին, սակայն արդյունահանման ներկայիս մակարդակը լուրջ արտահանում կազմակերպելու մեծ հնարավորություն չի տալիս[25]:

Գազի արդյունահանման ծավալները ավելացնելու դեպքում Իրանը կփորձի մեծացնել Եվրոպա մատակարարվող գազի ծավալները, սակայն քիչ հավանական է, որ Թեհրանը կընտրի հենց Հարավային գազային խողովակը: Նախ Իրանը չի ցանկանա կախվածության մեջ ընկնել Ադրբեջանից՝ հաշվի առնելով երկու երկրների հարաբերություններում առկա խնդիրները: Բացի այդ, գոյություն ունեն նաև այլընտրանքներ՝ ի դեմս Թուրքիայի տարածքով նոր խողովակաշարի կառուցմանը կամ հեղուկ գազի մատակարարումների ավելացմանը:

[25] https://www.bp.com/content/dam/bp/business-sites/en/global/corporate/pdfs/energy-economics/statistical-review/bp-stats-review-2018-full-report.pdf

ԹՈՒՐՔՄԵՆՍՏԱՆ

Այս երկիրը տիրապետում է գազի համաշխարհային պաշարների 10%-ին՝ 19.5 տրլն խ. մ.: 2017-ին Թուրքմենստանում գազի արդյունահանումը կազմել է 62 մլրդ խ. մ., իսկ սպառումը՝ 28 մլրդ խ. մ.[26]: Սակայն իր արդյունահանած գազի մեծ մասը Թուրքմենստանն ուղղում է դեպի չինական աճող շուկա, իսկ մյուս մասը՝ դեպի Իրանի հյուսիսային շրջաններ: Չինաստանում, Հնդկաստանում գազի աճող պահանջարկը և պահպանվող բարձր գները թույլ են տալիս ենթադրել, որ Թուրքմենստանը առաջիկայում կփորձի մեծացնել այդ ուղղությամբ գազի արտահանման ծավալները:

ՂԱԶԱԽՍՏԱՆ, ՈՒԶԲԵԿԻՍՏԱՆ

Այս երկրները տիրապետում են գազի համեմատաբար փոքր պաշարների (յուրաքանչյուրը՝ 1.1-1.2 տրլն խ. մ.): Ղազախստանը 2017-ին արդյունահանել է 27.1, Ուզբեկստանը՝ 53.4 մլրդ խ. մ. գազ, իսկ նույն թվականին այս երկրները սպառել են համապատասխանաբար 16.3 և 41.6 մլրդ խ. մ. գազ: Արդյունահանվող գազի ավելցուկի մեծ մասը երկու երկրները հիմնականում ուղղում են դեպի չինական շուկա, իսկ որոշ մասը՝ դեպի ՌԴ: Ղազախստանը 2018-ին միայն չնչին քանակությամբ գազ է մատակարարել Ադրբեջանին, սակայն ակնհայտ է, որ այս երկրներում առկա գազի ծավալների փոքր քանակը թույլ չի տա ՀԳՄ-ի միջոցով մեծամասշտաբ արտահանում կազմակերպել դեպի Եվրոպա, հատկապես եթե հաշվի առնենք չինական շուկայում աճող հնարավորությունները: Բացի այդ, այս երկրները բավականին սերտ հարաբերությունների մեջ են ՌԴ-ի հետ և հազիվ թե փոքր եկամուտներ ստանալու ակնկալիքով ներգրավվեն Գազպրոմի հետ մրցակցող այս ծրագրին:

ՌՈՒՍԱՍՏԱՆ

Գազպրոմի ներկայացուցիչները բազմիցս ՀԳՄ-ի շահագործմանը մասնակցելու և դրա միջոցով սեփական գազը Եվրոպա հասցնելու պատրաստակամություն են հայտնել: Սակայն մրցակցության տեսանկյունից ՌԴ-ի համար ավելի ձեռնտու կլինի սեփական խողովակաշարերով գազ մատակարարել Եվրոպային, մանավանդ, որ առկա և կառուցվող ենթակառուցվածքները դրա համար ստեղծում են բոլոր հնարավորությունները: Բաքուն էլ իր հերթին՝ դժվար թե

[26] https://www.bp.com/content/dam/bp/business-sites/en/global/corporate/pdfs/energy-economics/statistical-review/bp-stats-review-2018-full-report.pdf

ցանկանա ՀԳՄ-ը օգտագործել ռուսական գազը Եվրոպա հասցնելու նպատակով, այլապես այդ ծրագիրը կկորցնի ոչ միայն իր տնտեսական, այլև քաղաքական նշանակությունը:

2018թ. օգոստոսի 12-ին Ղազախստանի Ակտաու քաղաքում մերձկասպյան երկրների (ՌԴ, Ղազախստան, Ադրբեջան, Թուրքմենստան, Իրան) միջև ստորագրվեց Կասպից ծովի իրավական կարգավիճակի մասին կոնվենցիան, որը կարգավորում է նաև Կասպից ծովի տարածքով խողովակաշարերի անցկացման հարցը[27]: Բացի այդ, պայմանագրով հստակեցվում է նաև մերձկասպյան երկրների տարածքային ջրերի հարցը, ինչը թույլ կտա ակտիվացնել լճում էներգետիկ պաշարների հետազոտության գործընթացը: Կասպից ծովի կարգավիճակի հստակեցումը կարող է նպաստել տարածաշրջանից դեպի Եվրոպա գազի արտահանման ծրագրերի իրականացմանը, սակայն ինչպես նշվեց, դեռևս հարկավոր է հստակեցնել այդ ծրագրի տնտեսական և քաղաքական նպատակահարմարությունը տարածաշրջանի բոլոր երկրների համար

<u>ՀԳՄ-ի ընդարձակման օբյեկտիվ նախապայմանները քիչ են</u>

Ինչպես տեսնում ենք, Հարավային գազային միջանցքի ընդարձակման պարագայում դժվար թե հնարավոր լինի բավարար քանակությամբ գազ հայթայթել՝ այն եվրոպական շուկա ուղղելու համար: Միջինասիական երկրների և Իրանի համար՝ ի դեմս Չինաստանի, գոյություն ունի գազի արտահանման ավելի հարմար շուկա, ուստի վերջիններիս մասնակցությունը ՀԳՄ-ի ընդարձակմանը քիչ հավանական է:

2018թ. Չինաստանը նախորդ տարվա համեմատ շուրջ 32%-ով ավելացրել է գազի ներկրման ծավալները՝ այն հասցնելով 124.74 մլրդ խ. մ.-ի: Մի շարք փորձագետների գնահատմամբ մինչև 2025թ. Չինաստանում գազի պահանջարկի միջին տարեկան աճը կկազմի 7%՝ պահանջարկն ավելացնելով 150 մլրդ խ. մ.-ով[28]: 2018թ-ին Թուրքմենստան-Ուզբեկստան-Ղազախստան-Չինաստան խողովակաշարը շահագործվել է իր հզորությունների 100%-ով: 2017-ին Թուրքմենստանը Չինաստան է արտահանել շուրջ 34 մլրդ խ. մ. գազ, իսկ 2018-ի 1-ին կիսամյակում այդ ծավալները 2017-ի 1-ին կիսամյակի համեմատ աճել են ևս 18%-ով: Այժմ շահագործվում են վերոհիշյալ գազատարի 3 խողովակաշարերը, և նախատեսվում է 4-րդի կառուցումը[29]: 2019թ. դեկտեմբերին կավարտվի նաև Ռուսաստանից Չինաստան ձգվող «Սիբիրի ուժը» գազատարի շինարարությունը՝ տարեկան 38 մլրդ խ. մ. թողունակությամբ[30]:

[27] http://kremlin.ru/supplement/5328
[28] https://www.vedomosti.ru/business/articles/2019/01/14/791392-v-kitae-importnii-gaz
[29] https://neftegaz.ru/news/view/176752-Zagruzhennost-magistralnogo-gazoprovoda-Turkmenistan-Uzbekistan-Kazahstan-Kitay-priblizilas-k-100
[30] https://eadaily.com/ru/news/2019/03/14/v-silu-sibiri-gaz-podadut-1-sentyabrya

[31]

Միջինասիական գազի սպառման մեկ այլ խոշոր ուղղություն է հարավային ուղղությունը: 2015թ. մեկնարկել է Թուրքմենստան-Աֆղանստան-Պակիստան-Հնդկաստան (TAPI) գազատարի շինարարությունը, որը նախատեսվում է շահագործման հանձնել 2020թ. սկզբում[32]: 8-10 մլրդ դոլար արժողությամբ գնահատված այս ծրագրի շրջանակներում ակնկալվում է Թուրքմենստանից դեպի Հարավային Ասիայի վերոհիշյալ երկրներ արտահանել տարեկան շուրջ 33 մլրդ խ. մ. գազ[33]: Որոշ աղբյուրներում նշվում է, որ ծրագրին կարող են հետագայում միանալ նաև ՌԴ-ն, Ղազախստանն ու Ուզբեկստանը:

[34]

Առաջիկա տարիներին Իրանը և Միջին Ասիայի երկրները գազի արտահանման հիմնական ծավալները ուղղելու են դեպի Հարավային և Հարավարևելյան Ասիայի երկրներ: Այս տարածաշրջանից գազի շարժը հավանաբար տեղի կունենա ոչ թե դեպի

[31] https://defence.pk/pdf/threads/china-took-away-the-turkmenistan-afghanistan-pakistan-india-pipeline.276446/
[32] https://eadaily.com/ru/news/2019/01/14/afganistan-mozhet-poluchat-ot-tranzita-po-tapi-do-1-mlrd-v-god
[33] https://ru.wikipedia.org/wiki/ТАПИ_(трубопровод)
[34] http://foreignpolicynews.org/2015/12/31/tapi-a-geopolitical-binding/

արևմուտք, այլ դեպի արևելք: Նման պայմաններում ՀԳՄ-ի ընդարձակման և այդ նախագիծը գազով ապահովելու հեռանկարները մշուշոտ են:

ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԳՄ-Ի ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

Վերլուծության նախորդ հատվածը ցույց է տալիս, որ որպես աշխարհաքաղաքական գործիք՝ ՀԳՄ-ի շահագործումը հազիվ թե որևէ հաջողություն ունենա: Նույնը կարելի է ասել ծրագրի տնտեսական արդյունքի մասով: Նախագծի համաձայն՝ ՀԳՄ-ի իրականացման արժեքը 40 մլրդ դոլար է[35], և դժվար թե գազի եվրոպական շուկայում պահպանվող ներկայիս միտումների պայմաններում Ադրբեջանը կարողանա այս ծրագիրը եկամտաբեր դարձնել: Համեմատության համար նշենք, որ ռուսական կողմի «Թուրքական հոսքի» կառուցման արժեքը Գազպրոմը գնահատել է 7 մլրդ դոլար[36], մինչդեռ այս ծրագրի հզորությունը 2 անգամ գերազանցում է ՀԳՄ-ի հզորությանը: Եթե հաշվի առնենք նաև, որ ՌԴ-ն գազի գնագոյացման քաղաքականության հարցում ավելի մեծ հնարավորություններ ունի, քան Ադրբեջանը, կարող ենք ենթադրել, որ Գազպրոմը ի վիճակի կլինի ամբողջությամբ վերահսկելի դարձնել ադրբեջանական խողովակաշարը:

Այնուամենայնիվ, այս գազատարի շահագործումը Ադրբեջանին որոշակի քաղաքական ազդեցության լծակներ կտա: Առաջին հերթին կմեծանա Ադրբեջանի ազդեցությունը Թուրքիայում և Վրաստանում, ինչը Բաքուն կփորձի օգտագործել Հայաստանի տնտեսական մեկուսացումն ավելի խորացնելու նպատակով: Տրանսադրիատիկ խողովակաշարի շահագործումը Ադրբեջանի ազդեցությունը կմեծացնի նաև Բալկանյան որոշ երկրներում և Իտալիայում: Այս հանգամանքի վրա հարկավոր է առանձին ուշադրություն դարձնել, քանի որ Ադրբեջանը կարող է այս երկրներում լուրջ հակահայկական քարոզչություն կազմակերպել: Բացի այդ, վերոհիշյալ երկրները պետք է վավերացնեն ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության պայմանագիրը: Ունենալով որոշակի ազդեցության լծակներ՝ Ադրբեջանը կարող է փորձել հնարավորինս ձգձգել այդ գործընթացը:

Հարավային գազային միջանցքի շահագործումը թույլ կտա նաև շարունակել հարաբերությունների խորացումը ԵՄ-ի հետ՝ վերջինիս ստիպելով անուշադրության մատնել Բաքվում մարդու իրավունքների հետ կապված խնդիրները: Այս միտումը արդեն իսկ կարելի է նկատել մարտին Ադրբեջանի մասին ԵՄ հրապարակած զեկույցում, որտեղ թեև որոշակի անդրադարձ կատարվում է այդ երկրում մարդու իրավունքների խնդիրներին, սակայն գնահատականները մեղմ են:

[35] https://www.sgc.az/en
[36] https://www.vedomosti.ru/business/articles/2018/05/26/770852-gazprom-vtoroi-turetskogo-potoka

ՀԱՐԱՎԱՅԻՆ ԳԱԶԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԸ ԵՎ ԱՐՑԱԽՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ

Որքան էլ ՀԳՄ-ի շահագործումը Ադրբեջանի համար որոշակի արտաքին քաղաքական լծակներ ապահովի, այն նաև ունի խոցելի կողմեր: Այս նախագիծը, որի վրա տասնյակ միլիարդավոր դոլարներ են ծախսվել, Ադրբեջանին նույնպես կախվածության մեջ է գցում: Մասնավորապես Բաքուն պետք է ամեն ինչ անի, որպեսզի ապահովի խողովակաշարի բնականոն և անցնցում աշխատանքը, ինչը նախ և առաջ ենթադրում է, որ Ադրբեջանը պետք է զերծ մնա Արցախյան հակամարտության սրումից:

ԵՄ-ն և տարածաշրջանի մյուս երկրները կարող են ՀԳՄ-ը օգտագործել Ադրբեջանին բանակցային սեղանի շուրջ պահելու նպատակով: Մյուս կողմից էլ Բաքուն կարող է այն օգտագործել միջնորդների վրա հավելյալ ճնշում գործադրելու և բանակցություններում առավելություն ստանալու նպատակով: Թե այս երկու տարբերակներից որն ավելի լավ կաշխատի, մեծ հաշվով կախված կլինի նաև Հայաստանի իշխանությունների դիվանագիտական ջանքերի արդյունավետությունից:

Ինչ վերաբերում է ռազմական գործողությունների վերսկսման հեռանկարին, ապա Հայաստանի նախորդ իշխանությունները բազմիցս նշել են, որ Բաքվի կողմից ապրիլյան պատերազմի նախադեպի կրկնության փորձին կհետևի հայկական կողմի թիրախային հարվածը Ադրբեջանի նավթագազային ենթակառուցվածքներին: Հայտնի չէ Հայաստանի նոր իշխանությունների դիրքորոշումն այս հարցի վերաբերյալ, ուստի այն հստակեցման կարիք ունի: Համենայն դեպս, Հայաստանում ռազմավարական զսպման զինատեսակների, մասնավորապես՝ «Իսկանդերի» առկայությունը խոցելի է դարձնում Ադրբեջանի էներգետիկ ենթակառուցվածքները:

ՀԵՏԵՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ

Չնայած Հարավային գազային միջանցքի դերակատարությունը հաճախ ուռճացվում ու գերագնահատվում է Ադրբեջանի և որոշ արևմտյան երկրների կողմից, այնուամենայնիվ, այդ ծրագիրը չպետք է վրիպի Հայաստանի կառավարության ուշադրությունից: Ակնհայտ է, որ ՀԳՄ-ի շահագործմամբ Ադրբեջանը առաջին հերթին ձգտելու է արտաքին քաղաքական խնդիրներ լուծել, ուստի նման փորձերը պետք է համարժեք հակազդեցության արժանանան: Առաջիկայում ՀՀ կառավարության առաջնահերթ խնդիրներից մեկը պետք է լինի աշխատանքը այն երկրների հետ, որոնք ՀՄԳ-ի շահագործման շրջանակներում կարող են հայտնվել Ադրբեջանի ազդեցության գոտում:

Առաջին հերթին հարկավոր է արդյունավետ աշխատանք տանել Արևելյան Եվրոպայի երկրների հետ: ՀԳՄ-ի շահագործումը և Ադրբեջանի ազդեցության մեծացումը չպետք է ՀՀ-ԵՄ հարաբերություններում խոչընդոտներ ստեղծի: Այս առումով կարևոր դերակատարություն պետք է ունենան ինչպես խորհրդարանական

դիվանագիտությունը, այնպես էլ երկկողմ հարաբերությունները այդ երկրների կառավարությունների հետ:

Քանի որ Բաքվի նախաձեռնած այս հերթական էներգետիկ ծրագիրը նաև հետապնդում է Հայաստանի և Արցախի տարածաշրջանային մեկուսացումը խորացնելու նպատակներ, ուստի հարկավոր է համապատասխան հակախաղ գտնել: Այդպիսին կարող է դառնալ Իրանի և Վրաստանի հետ երկկողմ համագործակցության խորացումը և Իրան-Հայաստան-Վրաստան-Ռուսաստան առանցքի ձևավորումն ու ամրապնդումը:

Ադրբեջանում պետք է հստակ պատկերացնեն, թե ինչպիսի հետևանքներ կարող է ունենալ պատերազմի սանձազերծումը երկրի էներգետիկ ենթակառուցվածքների համար: Հայաստանը պետք է հստակեցնի այն գիծը, որը անցնելուց հետո Բաքուն կկանգնի բազմամիլիարդանոց էներգետիկ ենթակառուցվածքները կորցնելու փաստի առաջ: Ընդ որում, դիրքորոշման հստակեցումը պետք է լինի ոչ թե սպառնալիքի, այլ սթափեցնող ազդանշանի տեսքով:

Ռուսաստանն ու Իրանը գազի արտահանման հարցում Ադրբեջանի բնական մրցակիցներն են, հատկապես եթե հաշվի առնենք Բաքվի էներգետիկ նախագծերում արևմտյան կապիտալի առկայությունը: Հարկավոր է այս երկրների հետ լուրջ աշխատանք տանել՝ Բաքվից եկող վտանգները չեզոքացելու նպատակով: Եթե ընդունենք, որ տնտեսական արդյունավետության տեսանկյունից ՀԳՄ-ը Ադրբեջանի համար էական արդյունքներ չի ապահովի, ապա այդ ծրագրից բխող քաղաքական սպառնալիքների չեզոքացումը կարող է ընդհանրապես իմաստազրկել դրա գոյությունը: Փոխարենը՝ Հայաստանի իշխանությունների անգործության դեպքում Ադրբեջանը կփորձի այս նախագիծը ևս ծառայեցնել իր ծավալապաշտական նպատակներին:

Օգտագործած աղբյուրներ

1. http://interfax.az/view/755799
2. http://www.cdu.ru/tek_russia/issue/2018/11/536
3. http://www.cisstat.com/
4. http://www.energyofturkey.com/turkey-energy-news/turkey-hits-record-gas-consumption-and-imports-in-2017
5. http://www.gazprom.ru/projects/nord-stream2/
6. http://www.gazprom.ru/projects/turk-stream/
7. http://www.gazpromexport.ru/presscenter/information/2301
8. http://www.gazpromexport.ru/presscenter/news/2291
9. http://www.gazpromexport.ru/projects/transportation/
10. http://www.gazpromexport.ru/statistics
11. https://azertag.az/ru/xeber/V_proshlom_godu_v_Azerbaidzhane_bylo_dobyto_387_milliona_tonn_nefti_i_192_milliarda_kubometrov_gaza-1236207
12. https://biz.censor.net.ua/news/3107537/turtsiya_sokratila_zakupku_gaza_u_rossii_do_menee_50_vpervye_s_2010_goda
13. https://data.consilium.europa.eu/doc/document/ST-7443-2019-INIT/en/pdf
14. https://eadaily.com/ru/news/2019/03/13/konkurentu-tureckogo-potoka-ne-hvataet-gaza
15. https://eadaily.com/ru/news/2019/03/14/v-silu-sibiri-gaz-podadut-1-sentyabrya
16. https://neftegaz.ru/news/view/176752-Zagruzhennost-magistralnogo-gazoprovoda-Turkmenistan-Uzbekistan-Kazahstan-Kitay-priblizilas-k-100
17. https://neftegaz.ru/news/view/178480-Kitay-na-32-uvelichil-import-gaza-i-na-10-import-nefti-v-2018-g
18. https://polpred.com/?ns=1&ns_id=2911069 1/
19. https://polpred.com/?ns=1&ns_id=2915950
20. https://ru.wikipedia.org/wiki/Турецкий_поток
21. https://www.bp.com/content/dam/bp/business-sites/en/global/corporate/pdfs/energy-economics/statistical-review/bp-stats-review-2018-full-report.pdf
22. https://www.bp.com/en_az/caspian/operationsprojects/pipelines/SCP.html
23. https://www.bp.com/en_az/caspian/operationsprojects/Shahdeniz/SDstage1.html
24. https://www.bp.com/en_az/caspian/operationsprojects/Shahdeniz/SDstage2.html
25. https://www.iea.org/newsroom/news/2019/march/a-long-term-view-of-natural-gas-security-in-the-european-union.html
26. https://www.rbc.ru/business/26/02/2019/5c7516a89a79475ea07a38cc
27. https://www.sgc.az/en
28. https://www.tanap.com/media/news/turkey-historic-tanap-gas-pipeline-project-goes-live/
29. https://www.tanap.com/tanap-project/why-tanap
30. https://www.tap-ag.com/pipeline-construction/building-the-pipeline
31. https://www.tap-ag.com/pipeline-construction/project-progress

32. https://www.vedomosti.ru/business/articles/2018/05/26/770852-gazprom-vtoroi-turetskogo-potoka
33. https://www.vedomosti.ru/business/articles/2019/01/14/791392-v-kitae-importnii-gaz
34. https://www.dw.com/ru/мировой-рынок-сжиженного-газа-проснувшийся-гигант/a-47735120
35. http://kremlin.ru/supplement/5328
36. https://eadaily.com/ru/news/2019/01/14/afganistan-mozhet-poluchat-ot-tranzita-po-tapi-do-1-mlrd-v-god
37. https://ru.wikipedia.org/wiki/ТАПИ_(трубопровод)

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

*Նյութի ամբողջական կամ դրանից **քաղվածքների** վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը:*